

խած կրէին: Այս տեսակ Հրահողին տաճում են Հանգստա-
րան, նրա շուրջը 3 անգամ ժան բերում և 3 անգամ ծունը
չոքեցնում, ասել տալով զիմ ցաւիցս դուք առէք, որ ես պէտքընում
(լաւանում):

5. Մեռելատանը մինչև մէկ տարի ոչ թախս կը գնեն,
ոչ շերամ կը պահեն, Թխտի տակից ելած ձագերը գետինը կը
փորփորեն և փորած հողը մեռելի աչքերը կը լցուի. իսկ շե-
րամի քաշած թիւր աչքերը կը կապէ, երկու գէպքումն էլ
մեռելը Հանգրտա չի լինիլ:

6. Յուդարկաւորութեան միջոցին եթէ մեռելի վրայ անձ-
րեւ կաթէ՝ 40 օր անձրեւ կը գայ:

7. Մեռելից էլ կարող է զկեօխ լինիլ: Եթէ մէկը նոր
ննջեցնալի տնից մի ուրիշի տուն է գնում, անպատճառ նը-
րանց կ'զգուշացնի, որ վեր կենան ոտի կանգնեն: Առաջ եկողը
պխտի նստի, թնոյ անցիք. թէ չէ տնեցիք բոլորն էլ կը Հի-
ւանդանան, զկեօխ կը բռնուեն:

8. Արաշտի ժամանակ անձրեւ բերելու Համար, կտրում են մի
նոր մեռելի գլուխ, ամուր թռկով կապում են և զցում ծովը. բայց
զլուխը ծովում չեն թողնում, թէ չէ սարսափելի Հեղեղ կը գայ:

9. Մի տղրիւրից թէ որ երկու հոգի միասին զուր խմեն,
միաժամանակ էլ կը մեռնեն:

10. Նոյնպէս միասին հաց ուտելիս՝ վերջացնելուց թնոյ
զգալները իրար Հետ միաժամանակ պէտք չէ ցած գնել, թէ
չէ միաժամանակ էլ կը մեռնեն:

11. Տնից փախը ուսին դուրս գնալը լաւ չէ. տնից մե-
ռել կը լինի:

12. Ցան չորս կողմը որ պտտա զան, Հալքն ու մալքը
կը մեռնեն:

ՀՈԴՈՒ ՆԻ ՀԱՆԴԵՐՉԵՈՒ ԿԵՆԵՔԻ ՄՐՈՒՆ

Համշէնցի Հալք քնդուելով է. որ մալն էլ մարգու պէս
Հոգի ունի. մալք որ Հոգի չունենար, Բնչպէս պէտք է ապ-
րէր: Նա մալերին և առ-Հասարակ կենդանի արարածներին ան-

շունչ ու անշարժ էակներից շոկելու համար գործ է ածում ուղղակի «Հոգրուս» մայր խոսքը, որ հաւատարապէս վերաբերում է թէ մարդուն և թէ կենդանիներին: Հոգի անելով նա հասկանում է այն շարժումը, եռանդն ու կենդանութիւնը, որ բառուկ է բոլոր կենդանի էակներին: Բայց այն կենդանութիւնը նա ընդունում է ոչ թէ իբրեւ ամբողջ օրգանիզմի, կեանքի գործունէութեան հետեանք, այլ հակառակը՝ այդ կեանքն ու արարածների գոյութիւնը նա ընդունում է ինչպէս Հէնց այդ օրգանիզմի մէջ ապրող ու պահուած, անտեսանելի Հոգու արդիւնք, նրա Հետեանքը: Հոգին գնում է, կեանքն էլ ոչնչանում է, գոյութիւնը դադարում: Այնքան որ մարդու և մայրերի Հոգու մէջ այս տարբերութիւնն է դնում, որ մայրերի մեռնելուց թնոյ, նրանց Հոգին գնում, կորչում է, անասնի Հետ ուղղակի մեռնում է, մինչդեռ մարդու մեռնելուց թնոյ, նրա Հոգին չի մեռնում, կենդանի է մնում, մաքմանից բաժնորուած ապրում է իր համար նշանակուած տեղում, սպասելով վերջին դատաստանին, Քրիստոսի գալտեան, որ մարմնի Հետ միանալով, միւս աշխարհում ստանայ իր հատուցումը:

Նա հաւատում է, որ այս աշխարհից դուրս կայ ուրիշ աշխարհ, յաւիտեական հանգիստեալ կեանք, և իր կեանքի նրպատակն է ապրել այնպէս, որ միւս կեանքում արքայութեան արժանանայ: Դա այն տեղն է, որ նշանակուած պահում է բոլոր արդարների համար: Նրան տակ են, որ այս աշխարհում բոլոր նեղութիւն, աշխատանք, տանջանք ու հալածանք քաշաղները—միւս կեանքում խաղաղ ու հանգիստ կեանք են անցնելու, առանց արեւի ու ցրտի տակ տանջուելու և մի կրտոր հացի համար ողջ տարին Հոգի ու քարի Հետ կռուելու: Եւ նա սպասում է միամիտ սրտով, անշեշ յոյսով, այդ յաւիտեական հանգստին, երբ պէտք է վերջապէս վերջ տրուի նրա շարքաշ կեանքին, հանգիստ կեանք տկուի նրա համար առանց Հացի համար կիսամաշ մտածումներին:

Դրա համար նա այս աշխարհում որ առաջ պատրաստում է. իրան մաքուր է պահում, աշխատում է քիչ հայհոյել, թէև անիծած Հոգի գործն այնպէս է, որ եթէ չը հայ-

Հոյի, գործը առաջ չի գնալ: Տանեցոց էլը քֆրիւ ծուլութիւն կանեն, բան չեն անել: մային կը հարհայէ առաջ չի գնալ: Ինչ, արած: Ինչքան կարող է իրան զգալով է, մեղանշած ժամանակն էլ մատաղ կանէ: Աստու հետ կը հաշտուի, տէրտէրին թաքալիւ կը տալ, խունկ ա մոմ կը վառէ, սրբերին կը դիմէ բարեխառնութեան համար, «ծունր» — աղօթքը անպակաս կանէ, կը գոչալ, սրբութիւն կառնէ իր ժամանակին և վերջապէս տէրտէրից ա պապերից լսած ա իմացած օրէնքները կը կատարէ, որ չը լինի, թէ գծիւքի բաժին դառնայ: Նա շատ է վախենում դրանից, այս կեանքն ամբողջապէս աշխատանք-տանջանքով անցնել, վերջն էլ յախտեանական տանջանք ժառանգել, — ո՞վ չի վախիլ:

Մեռնելուց յետոյ մարդուն միւս կեանքում մազէ կամըրջից անցկենալ կրտան: Արդարը վրայից հանգիստ ա թեթեւ կանցնի, իսկ մեղաւորի անցած ժամանակ՝ մազը մէջանցից կը կտորի, մեղաւորը կընկնի տակը, ձիթով լիքը ամանի մէջ: Ամանում ձիւթը մշտապէս եռ է գալիս, նրանում պիտի խաշխաշուի այնքան, մինչև որ ցորենի հատիկի չափ դառնայ, նոր մէկանց էլի տատանների շնորհով — մեծանայ, առաջուան չափ դառնայ, էլի փոքրանայ ցորենի չափ և ալպէս անվերջ պիտի տանջուի — գէհէնի հուրի մէջ, դա է գծիւքը, կամ ինչպէս իրանք են ասում, «ձէհնամը»:

Իսկ յախտեանական արքայութիւնը — գրախար մի հրաշալի աղբի է, լի մշտադալար ծառերով, ծաղիկներով ա քաղցրահամ աղբիւրներով: Այնտեղ ոչ ցանում են, ոչ էլ հացի հոգս քաշում, այնտեղ ոչ բանել կալ և ոչ էլ այստեղի պէս տանջուել: Այնտեղ յախտեանական հանգստութիւն կալ, մարդու կեանքն անցնում է ազատ ա խաղաղ լսութեամբ, նրա հրեշտակների և արդար հոգիների հետ միասին:

